

Թեամբ ու 12-18 բթաչափ բարձրու-
թեամբ : Սերջը ծառին վարի կողմը
բնոյն վրայ խոռոչ մը կը բանան բաւա-
կան մեծութեամբ, և ետքը 6 բթաչափ
բարձրութեամբ ու 4 լայնութեամբ և
միջակ խորութեամբ քերթելով ծառը,
անկից կը սկսի վազել խէժը : Բայց ա-
մէն շաբաթ այս հարուածը նորոգելու
է՝ քերթուածքին բարձրութիւնը ա-
ւելցնելով, և ոչ երբեք լայնութիւնը .
այս ըսած բարձրութիւննիս ինչուան
12-14 ոտք կրնայ երթալ, որն որ եօ-
թը ութը տարի կը քշէ : Են ատեն
դարձեալ կը քերթուի ծառը, բայց
նայելու է որ առջի քերթուածքին զու-
գահեռական ու գրեթէ յարակից ըլ-
լայ : Են կերպով՝ կարգաւ ծառին չորս
կողմը կը քերթուի, որով խել մը տա-
րիներու միջոց՝ մի և նոյն ծառէն միա-
կերպ խէժ կ'առնուի :

Երբ անտառի մը մէջ բլեկնոյ ծա-
ռերը խիստ բազմութիւն են, ան ծա-
ռերն որ շուտով կ'ուզես վերցնել՝ չորս
կողմէն միանգամայն քերթելու է, ու
իւրաքանչիւր տարի աս քերթուածքը
իրեք անգամ սովորականէն աւելի եր-
կնցնելու է : Են խէժ հանելու գոր-
ծողութիւնը մայիսի կը սկսի, ու ին-
չուան սեպտեմբեր կը տւէ : Ենչափ
աւելի առատ կը վազէ խէժը, որչափ որ
օդերը աւելի տաք անցնին և կամ որչափ
որ ծառը աւելի արեւու դիմաց ըլլայ :

Ձիւթը, որ խիժային, հեղուկ ու
սևի զարնող նիւթ մըն է՝ հին բլեկնի-
ները թեթեւ կերպով ու աստիճանաբար
այրելով կը հանուի : Կարձեալ ծառին
արմատներէն ալ կ'ելլայ ձիւթը, և ա-
ւելի աղէկ տեսակ է, նմանապէս աւե-
լի առատ ալ : Երբոր փայտը կամ ար-
մատները մանր կը ջարդուի, մասնաւոր
կերպով շինուած փուռերու մէջ կը դը-
նեն զանոնք . ու հողակոշտով ծածկե-
լով վրանին՝ կրակ կու տան : Սերմու-
թիւնը դուրս հանել կու տայ զձիւթը
խողովակներու ձեռքով, որոնցմէ մաս-
նաւոր շտեմարաններու մէջ կ'իջնայ :
Ձիւթին աղէկ տեսակը՝ աւելի սևի
զարկած պէտք է ըլլայ, քան թէ բո-

լորովին սև, ու ամենեւին ջրային մա-
սունք պիտի չունենայ . սաստիկ սև
ձիւթը՝ այրած է :

Սոճուոյ ծառին ցեղին մէջ կը տես-
նես բնութեան բարձրագոյն ծառերը .
Լարիէիոյ ըսուած սոճին երբեմն ինչուան
150 ոտք բարձրութիւն կ'ունենայ, ու
իր բունը ինչուան 24 ոտք շրջապատ :
Ուէյմֆրէ սոճին՝ Սիւացեալ՝ Եսահանգաց
մէջ 180 ոտք բարձրութեան կը հաս-
նի : Իսկ Արա-Գարիա ըսուած տեսաշը,
որ Վիլի մէջ կը գտնուի, 260 ոտք
բարձրութեան կը հասնէ իր գագաթը :
Ես սոճիները հարիւրաւոր տարիներէ
ետքը ան աստիճանի բարձրութեան
կ'ելլան . և այն է զարմանալին՝ որ աս
ծառերուն որոշ տարիքը կրնայ գիտ-
ցուիլ, որովհետև ամէն տարի կարգ մը
ձիւղ կ'արձրկեն :

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Լորտ Պայրըն հռչակաւոր բանաստեղծը իր գը-
րուածքները Մըրրի տպագրատեղին տպել կու
տար, որն որ քերթողին բանաստեղծութիւննե-
րուն մեծ յարգին համեմատ՝ բարձր գնով կ'առ-
նէր զանոնք : Հետեւեալ ցուցակին մէջ կը տեսնեն
ընթերցողք իր քանի մը քերթութեանցը համար
Պայրընի առած ստակը :

Տարի		
1812 Պանդխտութիւն Արդլտի, Երգ	Ա և Բ	600 սղեռլ.
1813 Կեաւուր		525 —
1813 Ամուսին Ապիաոսի		525 —
1814 Հէն		525 —
1814 Լարա		525 —
1816 Պաշարուած Կորնթոսի		700 —
1816 Բարիզինա		525 —
1816 Պանդխտութիւն Արդլտի, Երգ Գ		1575 —
1816 Բանտարգել Շիլոնի		525 —
1817 Մանֆրէտի		315 —
1817 Տրաուենշ Դասսոյի		315 —
1818 Պէփփոյ		525 —
1818 Պանդխտութիւն Արդլտի, Երգ Դ		2100 —
1819 Մազեփիա		525 —
1819 Տոն Ժուան, Երգ Ա և Բ		1525 —
1820 Տոն Ժուան, Երգ Գ, Դ և Ե		1525 —
1820 Դուքսն Վենետիոյ		1050 —
1821 Սարգանաբաղ, Կայէն, Երկու		
Ֆոսգարեանք		1100 —
1822 Վէռնէր, Ձառագէմ, Երկինք		
և Երկիր, և այլն		3885 —
Խառնուրդք		450 —

Բովանդակութիւնը 19,340 սղեռլ.